ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ՆԱԻՐԱ ԽԱՉԻԿԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ

«ԵՍԱՅԻ ՆՉԵՑՈՒ ԳԼԱԶՈՐԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ» (ՎԵՆԵՏԻԿ Հ՝ 1917) ԵՎ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑՈՒ ԱՐՎԵՍՏԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԺԷ.00.03 - «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ, ԴԵԿՈՐԱՏԻՎ և ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ, ԴԻԶԱՅՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Նաիրա Խաչիկի Նազարյանի ատենախոսությունը նվիրված է Գլաձորի համալսարանի վաղ ներկայացուցիչ՝ նկարազարդող, մանրանկարիչ, դպիր Թորոս Տարոնացու հեղինակած առաջին աշխատանքին՝ Եսայի Նչեցու Գլաձորի Ավետարանին (Վենետիկ Հ՝ 1917): Թեև Տարոնացու արվեստի վերաբերյալ կան շատ ուսումնասիրություններ և հրատարակություններ, սակայն նկարչի ժառանգությունը մինչ օրս խորապես ուսումնասիրված չէ, աշխատանքն այնքան ծավալուն և հարուստ է, որ ուսումնասիրողների նոր սերունդներն այնտեղ կարող են հետազոտության նոր նյութեր գտնել:

Ատենախոսության թեման արդիական է և կարևոր նշանակություն ունի, քանի որ այն Թորոս Տարոնացու առաջին հեղինակային աշխատանքն է և ամենահարուստ պատկերազարդ ձեռագրերից մեկը, որտեղ առաջին անգամ ներկայացվում է նկարչի ձեռագրի և ստեղծագործության առաջին հեղինակային մանրանկարչության ամբողջական ուսումնասիրությունը, որոնք դիտարկվում են Թորոս Տարոնացու ստեղծագործության համատեքստում:

Հետազոտությունում հեղինակը համեմատել է Ավետարանի մանրանկարները նկարչի հետագա ձեռագրերի հետ, որտեղ երևում են նրա ստեղծագործական աճը, ոճական և պատկերագրական առանձնահատկությունները, վարպետությունը:

Ըստ ատենախոսի՝ Թորոս Տարոնացու ստեղծագործության ուսումնասիրության նպատակն ու հիմնական խնդիրներն են՝ ներկայացնել միջնադարյան Հայաստանի կյանքում Գլաձորի համալսարանի դերն ու նշանակությունը, հայ մանրանկարչության մեջ առկա հոսանքները և ուղղություններն ու դրանց արտացոլումը գլաձորյան ձեռագրերում, հետազոտել Տարոնացու՝ որպես Գլաձորի դպրոցի մանրանկարչի, ձեռագրերի պատկերազարդման համակարգը:

Ատենախոսն անդրադարձել է հայ արվեստում առկա տարբեր ավանդույթներին և հայ մշակույթի ազդեցությանը տարբեր արվեստների վրա, բացահայտել Տարոնացու արվեստի ուսումնասիրության ընթացքում առկա անճշտությունները, ուսումնասիրել 1307թ. Եսայի Նչեցու Ավետարանը, մանրամասն նկարագրել և վերլուծել բոլոր մանրանկարները, բնութագրել տեսարաններում ներկայացված տարբեր ավանդույթներին բնորոշ տարրերը, ձևերն ու տիպերը, դրանց ակունքները: Նա վերլուծության է ենթարկել Տարոնացու մանրանկարները, նկարագրել Տարոնացու հետագա ձեռագրերը՝ Ավետարանական մանրանկարները վերլուծել նկարչի անդրանիկ ձեռագրի համեմատությամբ, վերլուծել նաև Հին և Նոր կտակարանային այլ տեսարանները, կատարել հետագայի մանրանկարների ոճական վերլուծությունը:

Ատենախոսը նշում է, որ վերոնշյալ խնդիրների լուծման համար կարևոր նշանակություն է ունեցել 1307թ. Ավետարանի մանրանկարների և տեքստային էջերի ուսումնասիրությունը: Նա հետազոտել է Տարոնացու այլ պատկերազարդ ձեռագրերը ևս, ինչպես նաև վաղ քրիստոնեական, հայկական նախաքրիստոնեական, Կիլիկյան, բյուզանդական, արևմտաեվրոպական մի շարք ձեռագրեր:

Հետազոտության ընթացքում ատենախոսն օգտագործել է արվեստաբանական վերլուծության համայիր մեթոդը՝ ըստ անհրաժեշտության կիրառվելով վերլուծության նկարագրական, ձեռագրագիտական, զուգադրահամեմատական, աղբյուրագիտական, պատկերագրական, պատկերաբանական, ոճական և տեխնիկատեխնոլոգիական մեթոդները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից, պատկերացանկից և պատկերներից: Ներածության մեջ հանգամանալից հիմնավորվում է ուսումնասիրության արդիականությունը, գիտական նորույթը, բնորոշվում թեմայի մշակվածության աստիճանը, ներկայացվում հիմնահարցի հետազոտության նպատակն ու խնդիրները:

Ատենախոսության **Առաջին**՝ «Թորոս Տարոնացին՝ Գլաձորի համալսարանի 14-րդ դարասկզբի նշանավոր ներկայացուցիչը», գլուխը նվիրված է Թորոս Տարոնացու արվեստի մասին եղած ուսումնասիրություններին: Ատենախոսը ընության է առել Տարոնացու ձեռագրերի նկարազարդման համակարգը,

ներկայացրել միջնադարյան Հայաստանի կյանքում Գլաձորի համալսարանի դերն ու նշանակությունը, քննության առել «Հայկական վերածնունդ» եզրույթի կիրառելիությունը հայկական իրականության նկատմամբ: Անդրադառնալով հայ արվեստի տարբեր ավանդույթներին՝ Նաիրա Նազարյանը ներկայացրել է այլ երկրների արվեստի վրա հայկական մշակույթի ունեցած ազդեցությունը:

Երկրորդ՝ «1307թ. Եսայի Նչեցու Գլաձորի Ավետարանը. պատկերագրությունն ու ոճական առանձնահատկությունները», գլուխն ամբողջությամբ նվիրված է Եսայի Նչեցու Ավետարանի ուսումնասիրությանը: Ավետարանում ներկայացված են բյուզանդական տոնական շարքի 12 տեսարաններն ու «Խորհրդավոր ընթրիք»-ը, «Ոտնլվան», «Հարությունը»: Ատենախոսը նկարագրել և վերլուծել են բոլոր մանրանկարները, տեսարաններում ներկայացված տարբեր ավանդույթներին բնորոշ տարրերը, ձևերն ու տիպերը քննարկել Տարոնացու արվեստի և հայկական մանրանկարչության համատեքստում, կատարել պատկերների ոճական վերլուծությունը:

Երրորդ՝ «Թորոս Տարոնացու հասուն և ուշ շրջանի ստեղծագործությունները որպես 1307թ. «Եսայի Նչեցու Գլաձորի Ավետարանի» պատկերազարդման զարգացման արդյունք», գլխում համառոտ նկարագրված են նկարչի ավելի ուշ և հասուն շրջանի ձեռագրերը: Նաիրա Նազարյանը մանրանկարները վերլուծել է նկարչի առաջին ձեռագրի համեմատությամբ, քննության առել Հին Կտակարանի տեսարանները, կատարել ուշ և հասուն շրջանի մանրանկարների ոճական վերլուծություն:

Համեմատական ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփված են եզրակացություններում: Թորոս Տարոնացու վրձնին են պատկանում 20-ից ավելի ձեռագրերի նկարազարդումներ և դեկոր, որոնք գտնվում են տարբեր թանգարաններում: Տարոնացու պատկերազարդ ձեռագրերը օրինակ են ծառայել միջնադարյան Հայաստանի բազմաթիվ վարպետների համար: Ատենախոսը եզրակացնում է, որ սկզբում նկարիչը հանդես է գալիս միայն որպես մանրանկարիչ, իսկ ավելի ուշ շրջանի ձեռագրերում՝ նաև որպես դպիր: Տարոնացին հմտորեն տիրապետել է ոչ միայն նկարազարդման առանձնահատկություններին, այլև ձեռագրի ձևավորման տեխնիկական դժվարություններին:

Ատենախոսն իր աշխատանքում զուգահեռներ անցկացնելով Կիլիկյան ձեռագրերի հետ՝ նշում է, որ Տարոնացու արվեստում առկա են ռոսլինյան տարրեր:

Ըստ հեղինակի՝ Թորոս Տարոնացու և Թորոս Ռոսլինի ստեղծագործությունների համեմատությունը թույլ է տալիս նրանց անվանել միջնադարյան հայ արվեստի «երկու հանճարեղ Թորոս»:

Թորոս Տարոնացու արվեստի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի, քանի որ ընդգրկում է Մեծ Հայքում գոյություն ունեցող բոլոր հոսանքները, ուղղություններն ու ավանդույթները: Այն ներդաշնակորեն միավորում է բնիկ և Կիլիկյան Հայաստանի, Բյուզանդիայի և Արևմտյան Եվրոպայի մանրանկարչության ավանդույթները: Ուստի նկարիչը կարողացել է յուրովի վերամշակել սեփական մանրանկարները՝ ստեղծելով յուրահատուկ, ինքնատիպ, հարուստ և եզակի լուծումներ: Եվ հենց դա է նրան առանձնացնում իր ժամանակի մյուս նկարիչներից: Լինելով Գլաձորի համալսարանի ուսանող՝ Տարոնացին ստացել է իր ժամանակի բարձրագույն «ակադեմիական» կրթությունը: Տարիների ընթացքում, իր գեղարվեստական լեզուն հղկելով, Տարոնացին հասել է միջնադարյան ակադեմիզմի: Նրա ստեղծած ձեռագրերի քանակն ու որակը թույլ են տալիս նրան անվանել «ակադեմիական մեծ վարպետ»:

Բարձր գնահատելով ներկայացված ատենախոսությունը՝ ունենք հետևյալ դիտողություններն ու ցանկությունները.

1. Սեղմագրի էջ 13-ում նշված են Տարոնացու ստեղծագործական, ոճական և պատկերագրական առանձնահատկությունները, որոնք կիրառվել են Նչեցու Ավետարանի պատկերազարդման մեջ: Քանի որ դրանք հանդիպում են նաև հայ և օտարազգի մանրանկարիչների արվեստում, ուստի ցանկալի կլիներ, որ հեղինակը նշեր այդ մանրանկարիչներին:
2. Սեղմագրի էջ 17-ում նշված է «Ականատես ենք մանրանկարչական ոլորտում նկարչի մասնագիտական աճին ու կատարելագործմանը», որն առկա է նկարչի հետագա աշխատանքներում, շահեկան կլիներ, եթե նշվեին այդ աշխատանքները:
3. Ատենախոսությունում և սեղմագրում նկատվել են ոչ հստակ շարադասությամբ նախադասություններ և տեխնիկական վրիպակներ

Վերոնշյալ դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը:

Ամփոփելով նշենք, որ ատենախոսության հեղինակն իրականացրել է ծավալուն աշխատանք, կատարվել են արժեքավոր ուսումնասիրություններ,

մասնագիտական հետաքրքիր առաջարկներ, որոնք կարող են օգնել հետագայում նոր սերունդներին որպես հետազոտության նյութեր:

Արդյունքում՝ գտնում եմ, որ Նաիրա Խաչիկի Նազարյանի «Եսայի Նչեցու Գլաձորի Ավետարանը» (Վենետիկ Հ՝ 1917) և Թորոս Տարոնացու արվեստը» թեմայով ատենախոսությունն իր գիտական պատշաճ մակարդակով լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին. իսկ ատենախոսը միանգամայն արժանի է ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը. ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ,

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Վիգեն ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի ստորագրությունը վավերացնում եմ՝

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն՝

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

11 հունվար 2024թ.